

Արձանագրություն N 158

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ-ի
դեկտեմբերի 29 -ի նիստի

Օրակարգ

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ընթացքը/զեկ.՝ դեկան, պրոֆ. Գ. Պետրոսյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմաների հաստատում /զեկ.՝ Խ. Գալստյան/:
3. Աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը/զեկ. Խ. Գալստյան/:
4. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Հանձնարարել ամբիոնի վարիչներին հետևելու քննաշրջանի ըստ հաստատված ժամանակացույցի կազմակերպման ընթացքին:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.
ա/ ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ Նարեկ Տիրատուրյան - «ՀՀ ռազմաքաղաքական ոլորտի քաղաքացիական վերահսկողության հայեցակարգային հիմքերը», ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանին
բ/ ԵՊՀ հայցորդ Առնակ Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները ժողովրդավարական համախմբման փուլում», ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Ենգոյանին:
3. Երաշխավորել տպագրության
ա/Ա. Ենգոյանի, Խ. Գալստյանի, Ծ. Ղազարյանի «Հակամարտությունների փոխակերպում» ուսումնամեթոդական ձեռնարկը:
բ/ «Իրան-Հայաստան-Վրաստան. Խաղաղ հարևանության և զարգացման տեսլականներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի դեկան, Գիտական խորհրդի
նախագահ, պրոֆ.**

Գ. Պետրոսյան

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
Ֆակուլտետի Գիտական խորհրդի քարտուղար, դոց.**

Խ. Գալստյան